ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հոկտեմբերի 2025 թվականի N 1503 - Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետն ու 22-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ 44 260 000 դրամ սկզբնական արժեքով «էկզոսկելետոն» աջակցող միջոցը (UAN/GO, REF-GMO4001, SN-009, այսուհետ՝ գույք) նվիրաբերել «Ջինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն)՝ համաձայն կազմակերպության կողմից ներկայացված հանրօգուտ ծրագրի՝ շահառուների վերա-կանգնողական բուժման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում կազմակեր-պության հետ կնքել 2022 թվականի հուլիսի 29-ին կնքված անհատույց օգտագործման պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիր.

2) սույն որոշման 3-րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում կազմակերպության նախագահի հետ համատեղ ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում կազմակերպության նախագահի հետ կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

30.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ